ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**
2.	Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետ**
3.	Գործուղման վայրը և ժամկետները. **2018թ. նոյեմբերի 1-3, ք. Բիշքեկ, Ղրղզստանի Հանրապետություն**
4.	Հրավիրող կողմը. **ԱՊՀ Գործադիր կոմիտե**
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Մասնակցությունը ԱՊՀ մասնակից պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի 23-րդ նիստին**
6.	Քննարկված թեմաները. **Խորհրդի անդամները ներկայացրել են իրենց երկրներում միգրացիոն իրավիճակը,** ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների միջև միգրացիայի ոլորտում երկկողմ համագործակցության ներկա իրավիճակը: Մասնավորապես, անդրադարձ է եղել երկկողմ ռեադմիսիոն համաձայնագրերի ստորագրմանը: Այս առնչությամբ նշել եմ, որ ՀՀ-ի և Մոլդովայի, Ղրղզստանի և Ղազախստանի միջև ռեադմիսիոն համաձայնագրերը գտնվում են բանակցման և ներպետական համաձայնեցումների փուլում: ԱՊՀ տարածքում փաստաթղթերի կեղծման և անօրինական միգրացիայի կանխարգելման թեմաների առնչությամբ ներկիայացրել եմ ՀՀ ոստիկանության գործընկերների նախապես տրամադրած տեղեկատվությունը: Օրակարգում ներառվել էր նաև ԱՊՀ մասնակից պետությունների անվավեր անձնագրերի ընդհանուր բանկի ստեղծման հարցը, և քանի որ տվյալ հարցի մասին Գործադիր կոմիտեն նախապես չէր տեղեկացրել, և ՀՀ համապատասխան մարմինների (Ոստիկանության ԱՎՎ) դիրքորոշումը հայտնի չէր, այս հարցի վերաբերյալ արձանագրային որոշումը չեմ ստորագրել: Նիստի Ադրբեջանի ներկայացուցիչը ներկայացրեց հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության իրենց փորձը, որը, ըստ էության, խնդրահարույց չէր, ուստի ի գիտություն ընդունելու մասին արձանագրային որոշումը ստորագրել եմ, սակայն տեսնելով, որ ապաստանի համակարգի մասին իմ ներկայացրած զեկույցը Ադրբեջանի ներկայացուցիչը չի ստորագրել, իր զեկույցի առնչությամբ իմ ստորագրությունը ջնջել ու հետ եմ կանչել: Այս առնչությամբ զրուցել եմ խորհրդի քարտուղար, ՌԴ ՆԳՆ միգրացիայի հարցերով գլխավոր վարչության պետ Օլգա Կիրիլովայի հետ, ով նշեց, որ գնահատում է իմ կողմից կատարված առաջին

	քայլը, սակայն իրենց համար հասկանալի է նաև ստորագրությունը ջնջելու քայլը: Իմ կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրման համակարգի մասին» զեկույցը ներկայացնում եմ կից՝ ռուսերեն լեզվով:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Հանդիպումներ և շփումներ եմ ունեցել ԱՊՀ մասնակից պետությունների գործընկերների հետ, ինչպես նաև ՌԴ ՆԳ նախարարի առաջին տեղակալ Ալեքսանդր Գորովոյի հետ: Նիստի նախորդ օրը ներկա եմ գտնվել նաև ԱՊՀ մասնակից պետությունների անօրինական միգրացիայի դեմ պայքարի համատեղ հանձնաժողովի նիստին, որին սովորաբար մասնակցում է ՀՀ ոստիկանության ներկայացուցիչը, սակայն քանի որ ոստիկանությունից ներկայացուցիչ չկար, երկրի ներկայացվածության ապահովման համար ներկա եմ գտնվել նիստին: Հաջորդ օրը ԱՊՀ միգրացիոն մարմինների ղեկավարների նիստի ընթացքում հանդես եմ եկել «Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրման համակարգի մասին» զեկույցով, որը կցվում է: Ռուսաստանի գործընկերների հետ շփումների ընթացքում բարձրացրել եմ ՌԴ-ում մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների համաներման հնարավորության հարցը այն դեպքերում, երբ քաղաքացիների կողմից կատարված իրավախախտումները խիստ չեն: Քննարկել ենք նաև տարբեր իրավախախտումների պարագայում տարբեր վարչական տույժեր կիրառելու հնարավորությունը՝ վարչական վտարումից խուսափելու նպատակով: Օ.Կիրիլովան նշեց, որ ՌԴ նախագահը ստորագրել է Մինչև 2025թ. ՌԴ միգրացիոն քաղաքականության հայեցակարգի նոր խմբագրությունը, որի Գործողությունների ծրագիրը պետք է մշակվի առաջիկայում: Այս առնչությամբ պայմանավորվեցինք, որ մեր ծառայությունը ևս կարող է ներկայացնել որոշակի առաջարկություններ առաջիկա ամսվա ընթացքում:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Ստորագրել եմ խորհրդի նիստի արձանագրային որոշումները, բացառությամբ 5-րդ կետի՝ ԱՊՀ մասնակից պետությունների անվավեր անձնագրերի միասնական բանկի ստեղծման վերաբերյալ: 8-րդ կետի՝ Ադրբեջանի ներկայացուցչի զեկուցման վերաբերյալ խնդիրը ներկայացրել եմ վերևում: Առաջարկ է հնչել Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել Երևանում, սակայն գործընկերներին խնդրել եմ հետաձգել Երևանում անցկացման հնարավորությունը, քանի որ մեծ կազմակերպչական աշխատանք պետք է նախորդի դրան: Առաջարկն ընդունվել է, և խորհրդի հաջորդ նիստը կանցկացվի Ուզբեկստանում:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

	Կարծում եմ, որ առնվազն 2020թ-ին խորհրդի նիստը Երևանում անցկացնելու հնարավորությունը պետք է դիտարկել, քանի որ վերջին անգամ Հայաստանն այդ նիստը հյուրընկալել է 2014թ-ին, և յուրաքանչյուր անգամ հրաժարվելը դառնում է ավելի բարդ: Այս առնչությամբ անհրաժեշտ է կատարել մեծ կազմակերպչական աշխատանք, որում պետք է ներգրավվեն ՀՀ ՏԿԶՆ Միգրացիոն ծառայությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ ոստիկանությունը: Առաջարկում եմ քննարկումներն այս առնչությամբ սկսել առնվազն 2019թ-ի մարտից:
10.	Ստորագրությունը, ամսաթիվը: 06.10.2018